ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» 09 2015 թվական N 195-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի գյուղական համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը, խախտելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ վերահսկողություն չի իրականացրել «Տուֆագործ-90», «Կ.Գորոյան և գործընկերներ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություն) և համայնքի ղեկավարի միջև կնքված 2004 թվականի մայիսի 14-ի, 2003 թվականի հոկտեմբերի 14-ի պայմանագրերի համաձայն շինաքարի արտադրության համար ընկերություններին վարձակալությամբ տրամադրված հողամասերի ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների» 2015 թվականի հուլիսի 30-ի N 04 ակտը և Տեսչության պետի 2015 թվականի օգոստոսի 21-ի N 04 որոշմամբ արված միջնորդությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ, 281-283-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի գյուղական համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի նկատմամբ նշանակել 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:
2. Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկել Անանիկ Ոսկանյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականությանի հետ ճիշտ է